24013

331.87
Ч-21

1935

Ա. ՍԽԱՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ՍԽԱՀ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԽՈՉԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

331.87
4-21

ԱԶԵՐՆԵՇՐ
Գյուղատնտ. բաժին
Բագու — 1935

24013

Խմբագիր Լ. Թանիելյան
Տեխ. խմբագիր Ա. Արխան

Baş mətbuat mydirligi myvəkkilligi № 2250. Sifariş № 241. Tiraz 2000
İstehsalata verilmiş 22/III—35 Capa imzalanmış 29/II-35. Cap listi 1/2.
Kağız formatı 82×110. Azərnəşr mətbəəsində basıldı. 26-lar adına
„Kitab Sarayı" Bakı, Əli Bajramov kycəsi.

Ս 11 22
331.87
Կ-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԽԱՀ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԽՈՂԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կոլտնտեսային խոզաբուծական ապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականի աշխատանքը կազմակերպվում է ըստ գործարքի դրա հետ միասին աշխորը հաշվում են նաև բեղմնավորման, նոր ծնվածների պահպանման, աճեցման արտադրանքի կենդանի քաշի հիման վրա։

Նայած ֆերմայի մեծության, կոլտնտվարչությունն առանձնացնում է խոզաբուծական մեկ կամ մի քանի մշտական բրիգադներ կազմված՝ որինակի համար 3—4 կոլտնտեսականից, վերոնշյալ մեկը՝ գլխավոր խոզարածը բրիգադիր է հանդիսանում։

Ամառը խոզերն արածացնելու համար, ըստ կոլտնտվարչության հայեցողության՝ խոզարածներին ոգնականներ է տրվում։

Խոզերի խնամքի գործում կոլտնտեսականների գործնական փորձառությունը բարձրացնելու համար կոլտնտեսականների աշխատանքի տևողությունը այդ բրիգադում յերեք տարուց պակաս չպետք է լինի։

2. Կոլ. խոզաբուծական ապրանքային ֆերմայի աշխատանքները ղեկավարելու համար կոլտնտեսությունը ընտրում է ֆերմայի վարիչ։ Ցեղական և խոշոր (500 գլխից ավելի) ապրանքային ֆերմայի վարիչները հաստատում և ազատում է աշխատանքից հողժողկոմատը շրջհողբաժնի առաջադրությամբ։ Ֆերմաների վարիչները հաստատում և ազատում է աշխատանքից շրջհողբաժինը կոլտնտվարչության առաջադրությամբ։ 25 գլուխ մերուններից ավելի ունեցող ֆերմաների վարիչները ազատվում են անասուններին անմիջապես սպասարկելուց։ Քիչ մերուններ ունեցող ֆերմաներում բրիգադիր է հանդիսանում վարիչը։

3. Ամեն մի բրիգադին կցվում են ծնված մերուններ, անհրաժեշտ քանակով բեղմնավորող խոզերը (վարազ), շենք և ինվեն-

17 MAY 2013

տարը։ Բացի այդ բրիգադի ներսում յուրաքանչյուր խոզաբուծին նրա ամբողջ աշխատանքի ընթացքում, կցում են 8—9 նորածին մերուն մինչև $2^1/_2$ ամիս հասակը, պահելու պայմանով իսկ բրիգադիրին — բեղմնավորող խոզերը (վարազները) ու մի քանի մերուն ըստ կոլտնտեսության հայացողության։ Մնացած անասունները յերկու ու կես ամսականից մեծ խոճկոտները աճեցվող մատղաշներն ու ծծից կտրած խոզերին սպասարկում է ամբողջ բրիգադը։

4. Կոլտնտեսության համար սահմանված անասնաբծության զարգացման պետական պլանի համաձայն՝ կոլտնտեսությունը բեղմնավորման, նորածին ստանալու, խնամելու և ծծից կտրելու համար հատատում է ֆերմայի և ամեն մի բրիգադի տարեկան պլանը։

5. Ապրանքային ֆերմաների աշխորերը հաշվում են գործարքի հիման վրա՝ հետևյալ գնահատումներով։

Խոզարածին հաշվվում է

1. Խոզարածին կցած յուրաքանչյուր մերունի բեղմնավորման համար հաշվում են 3 աշխոր։ (Կրկնակի բեղմնավորության համար աշխոր չի հաշվվում)։

2. Խոզարածին կցած մերուններից ծնված ամեն մի կենդանի, խոճկորի համար հաշվում են՝ . . . 1,5 աշխոր։

3. Խոզարածին կցած մերունի ամեն մի խոճկորի համար վորը խնամվել է մինչև յերկու ու կես ամսական հասակը հաշվում են՝ . . . . . 2,5 աշխոր։

Ամբողջ բրիգադին հաշվվում է

6. Ծախված, կամ փոխադրված մերուններն հոտի—կենդանի քաշի յուրաքանչյուր ցենտների համար հաշվվում է 10 աշխոր։

Բրիգադի՝ կենդանի քաշի համար վաստակած աշխորերը բաժանվում են շարքային խոզարածների ու բրիգադիրի միջև։

ա) Յեթե խոզաբուծական բրիգադան բրիգադային գործարքի կամ առանձին խոզապահներ անհատական գործարքի դեպքում լավ աշխատանքի հետևանքով ապահովել են մատղաշների լրիվ պահպանումը, մերուններն սուբա չմնալը, խոզագլխաքանակի լավ զիրությունը, այդպիսի բրիգադի բոլոր անդամներին և առանձին խոզապահներին անհատական գործարքի դեպքում կոլխոզի վարչությունը կատարում է աշխորի ավելացում, ընդհանուր վաստակած աշխորի 10%-ի սահմաններում, առաձին աչքի ընկնող հարվածայիններին մինչև 15%, իսկ բրիգադիրին և ֆերմայի վարիչին մինչև 20%-ի ավելացում։ Լավ աշխատանքի համար աշխորերի դանգումը կատարվում է բրիգադի և առաջին խոզապահների կողմից արտադրական առաջադրանքը կատարելուց հետո։

բ) Յեթե խոզաբուծական բրիգադան, բրիգադի գործարքի և առաջին խոզապահները անհատական գործարքի դեպքում վատ աշխատանքի հետևանքով թույլ են տվել մատղաշների փչանալուն, մերուններն սուբա (չբերի) մնալուն խոզագլխաքանակի նիհարելուն, ֆերմայի վարիչից և այդպիսի բրիգադի բոլոր անդամներից, իսկ առանձին խոզապահներից անհատական գործարքի դեպքում կոլխոզի վարչությունը վաստակած բոլոր աշխորերից դուրս է գալիս մինչև 10%։

Անասունների փչանալու, սուբա—(չբերի) մնալու, գլխաքանակի նիհարության համար յուրաքանչյուր ամսվա վերջում, վորի ընթացքում տեղի յե ունեցել անասունների անկումը պահում են աշխորերից։ Վատ աշխատանքի առանձին ցուցանիշների համար աշխորերի պահումների չափը սահմանվում է կոլխոզի վարչության կողմից այն հաշվով, վորպեսզի խոզապահներից, բրիգադիրից, ֆերմայի վարիչից տարվա ընթացքում բոլոր հանումները ամբողջ տարվա ընթացքում վաստակած աշխորերի 10%-ից բարձր չլինի։

7. Ցեղային ֆերմաներում աշխորերը հաշվվում են հետևյալ գնահատումներով։

Խոզարածին հաշվվում է

1. Նրան կցած յուրաքանչյուր մերունի բեղմնավորման համար հաշվել 4 աշխոր (կրկնակի բեղմնավորման համար աշխորեր չեն հաշվվում)։

2. Խոզարածին կցած մերուններից ծնված ամեն մի կենդանի խոճկորի համար հաշվել 1,5 աշխոր։

3. Ամեն մի խոճկորին մինչև յերկու ու կես ամսական հասակը հասցնելու համար հաշվել 3 աշխոր։

Ամբողջ բրիգադին հաշվվում է

1. Յուրաքանչյուր ցեղային (ելիտ) ու առաջին տեսակի անասունը ծախելու կամ եգերի հիմնական հոտի մեջ փոխադրելու համար հաշվել 5 աշխոր։

2. Վաճառված կամ մերուններն հոտի մեջ փոխադրած գլխաքանակի կենդանի քաշի ցենտների համար (բացի ցեղային—ելիտ) և առաջին տեսակից հաշվել 6 աշխոր։

Ցեղային (ելիտ) և առաջին տեսակի ծնումներից և կենդանի քաշից վաստակած ամբողջ աշխորերը բաժանվում են բրիգադի անդամների միջև։

ZUUՌ-Aթm ՍՍՌ
Ս. ԿՄ. Ա. Մաշտոցի անվան
61964·67

8. Ցեղային և ապրանքային ֆերմայի բրիգադիրի աշխատանքը հաշվում են նրան կցած անասուններին խնամելու համար, շարքային խոզաբուծների համար հաստատված՝ գներով։ Բացի այդ, նրա բրիգադի ամեն մի մերուսի բեղմնավորման համար հաշվվում է 2 աշխատանք և նրա վաստակած աշխատանքների 20%-ը՝ բրիգադի աշխատանքները ղեկավարելու համար։

9. Ցեղային և ապրանքային ֆերմաներում 2 տարի անընդհատ աշխատող բրիգադիրների ու խոզաբուծների աշխատանքը սահմանված գնահատումներից 10%-ով բարձր են հաշվվում, իսկ յերեք տարուց ավել աշխատողներինը 15%-ով բարձր են գնահատվում։

10. Ֆերմայի վարիչը, վորը ազատված է անասուններին անմիջապես խնամելուց աշխատանքը հաշվվում են յերրորդ կարգով (մեկ աշխատանք), յեթե նա յերկու տարուց պակաս է աշխատել, իսկ յերկու տարուց ավել՝ աշխատողների աշխատանքը հաշվվում են 4-րդ կարգով (1,25 աշխատանք), 6 ամիսից վոչ պակաս խոզաբուծության պատրաստականություն ունեցողների աշխատանքը համապատասխան չափով մեկ կարգ բարձր են հաշվում։

11. Խոճկորներ ստանալու և խնամելու պլանները գերակատարելու համար խոզաբուծները, բրիգադիրներն ու ֆերմաների վարիչները պարգևատրվում են մեկ-յերկու խոճկորներով նայած պլանից ավել մինչև 2 ու կես ամսական հասակի խոճկորների քանակին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-Արմ ССР
Ա. ԿՄ, А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՄՈՒԶԵՈՒ

319
С 36-К
Сальде

ASŞÇ XALQ TOPRAQ QOMISARLЬQЬ

ASŞÇ qolxoz donuzculuq əmtiə fermalarьnda əmək təşkili haqqьnda QAJDALAR

AZƏRNƏŞR
Kənt-təsərryfat şə'bəsi
Bakь—1935

«Ազգային գրադարան»
NL0205046